

3. Մատթէոս մաքսաւոր, Նանգեաւ Թ. Հ. ՌԿԱ (= 1612)*:

4. Գրիգորի Նիկորայ Պարոն Քաբրի, 1731:

Հոս յիշուելու արժանի է՝ որ Վոլջինաքիի պարտիզին մէջ, թգրին.-կայսրին. թղթատարութեան այժմու շէնքին քով՝ կար Հայոց Տին եկեղեցի մը Ս. Երեմիայի անուամբ, որ անցեալ դարու վերջերը բոլորովին կործանեցաւ:

Տեղական աւանդութիւնն այս եկեղեցւոյ մասին կ'աւանդէ՝ որ այս պարտիզին եւ աւերակին տէրն՝ Տիկին Քաբրի երբ իւր տղուն Տեա պարտէզը կը պտըտէր, եկեղեցին կործանեցաւ, ինք եւ տղան փլատակաց տակ մնացին, ինք մեռաւ իսկ տղան ազատեցաւ ողջ առողջ: Այս աւերակին քարերէն շինուեցան ժողովրդապետական եկեղեցւոյն կից մատուռն եւ ասոր խորանը:

* Անշուշտ այս տապանաքարն նոյն է Ս. Խաչ եկեղեցւոյն արեւմտեան դրան քով եկեղեցիէն դուրս կեցող երկաթագիր տապանաքարին հետ, որոյ արձանագրութիւնն է՝

«Տապանս այս Մարտիրոսին
Մեծ տամիաճի Երիմինն
Աստ եղեալ մարմին սորին
Ի ծերութեան ժամանակին
Առ աստուած փոխէ զոգին
Թվին ՌԿԱ, մախի ԻԲին:.. (= 1612)

Նոյն եկեղեցւոյ մէջ կան երկու հնագոյն տապանաքարք: Առաջնոն արձանագրութիւնն է՝ «Սայ է տապան Էսաի իրեցու, թվին ՋԽԶ., (1497): Իսկ երկրորդին՝ «Սայ է տապանն Էտիլ Պէյին, որ է որդի Սողոմոնին հանգեաւ Թվին հազար ԻԸ ապր. ամսոյ ԺԴ.ին., = (1579):

Ժ. Թ.

2*